ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 6, 1957 Общественные науки

Ս. Օրբելյան

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

Ստորև հրատարակվող փաստաթուղթը, որը գրված է 1828 թ. Սյունյաց արքեպիսկոպոսի կողմից և տրված է Մելիք Ստեփանոսին ու Մելիք Սողոմոնին, վերաբերում է Հայաստանը Ռուսաստանին միացվելու պատմական տարիներին և որոշակի հետաքրքրություն է ներկայացնում։ Կոնդակը պահպանված է եղել Մելիք Ստեփանի թոռներից մեկի անձնական արխիվում։ Նույն արխիվում պահպանված այլ փաստաթղթերից երևում է, որ Մելիք Ստեփանոսը Ղափանի շրջանի Առաջաձոր գյուղից էր։ Նա 1802 թ. գնել է Առաջաձոր գյուղի հողերը, վարելահողը, արոտավայրերը և անտառները։ Այդ ժամանակից էլ համարվել է գավառի խոշոր բեկերից մեկը։

1823 թ. Շուշու նահանգային դատարանը № 539 կամերալ գործով Ղարաբաղի բեկական մատյանում գրանցում և իրավաբանորեն ձևակերպում է Ստեփանոս բեկի մելիքության իրավունքը։ Հետագայում, 1858 թ. երբ Զանգեզուրը ենթարկվում է Օրդուբադի գավառին, գավառապետ իշխան Թարխան Մովրովը Ղարաբաղի 1837 թ. դեկտեմբերի 10-ի փաստաթղթերի հիման վրա Ստեփանոսի եղբայրներ Մարտիրոս բեկին և Ահարոն բեկին տալիս է մելիքության վկայագիր։

Տարեցտարի Մելիք Ստեփանոսը նորանոր հողեր է գրավում, դառնում հարևան Տորթնի գյուղի Մելիք Հյուսեյնի հակառակորդը։ Երկու մելիքների մեջ խորացող հակասությունների հողի վրա Մելիք Հյուսեյնը կազմակերպում է Մելիք Ստեփանոսի սպանությունը։ Սպանությունից հետո Ստեփանոսի մելիքության գործերը վարում են նրա ժառանգները, սերնդից սերունդ։

* * *

Յամի Տեառն 1824, գաւառին Ա՛ճամանու Մէլիք Ստէփանէսն, Մէլիք Սողոմոնն, յառաջնաձորեցի, ի ժամանակի Գօրիսու զօրաց գլխաւոր պօտ պօլկովնիկ բարեծնունդ նազիմկայ Քէպր Անգրէիչին. և Նորաշինքու զօրաց կապիտան Իւան Վէկինտիչին և ի նոսին եղեալ չինովնիկներին. և ի նոցունց յանձնեցեալ բոլորովին խաչակիր զօրացն. բարերանեալ հզօր Տէրութեան հպատակ և հաւատարիմ ծառայ գտանելով. կատարեալ և ճշմարիտ վերապատուութեամբ եցոյց ծառայութիւն անխոնջ ջանիւ. մինչ ի գալ ժամանիլ խառնակութեան պարսից. որ ընդ քրիստոսազօր Տէրութեանց մերոց. յամի 1826 թուին. իսկ և ի վրդովմանց երկոքին տէրութեանցն. սա յիշեալ Ազնիւ մէլիք Սողոմոնն. մէլիք Ստեփանէսն. մահալին յԱճանանու. բնիկ յառաջնաձորեցի. իւր ճշմարիտ և ջերմեռանդ հաւատարմութեամբն անկորուստ պահպանելով մշտապէս աստ և անդ ծածկարար դասիպս արկանէր. և զհայազնեայ ժողովուրդսն համոզեալ պահպանէր զիւրաքանչիւր ոք ի տեղի իւրում. յուսադրելով թէ ողորմութեամբ Տեառն զկնի քանի աւուրց յետ զօրքն ռուսաց վերստին ունի մտանել յերկիր մեր։ Եւ վասն հաւատարմութեան սորին. բազում ոխակալ անձինք համբաւեալ էին. առ երևելի անձանցն. պարսից. զորս եկեալ ի Ատրպատականէ իբր գերեալ ունէին զերկիրս այս. և կամէր նոցա. ի վնասի հասուցանել յիշեալ մէլիք Սողոմոնին. բայց ողորմութիւն Տեառն անսպառ գոլով այց արար ի անօրինացն յայնցանէ յոյժ փութանակի։

Եւ որ և մեք տեսանելով բազմաւորակի նեղութիւնսն. որ ի սէր ռուսաց Տէրութեան աղաչաւ կրեաց. վասն այն և մեք զայս վկայական թուղթս տուաք ինքեան. զի առաւել ևս հպատակութիւն ցուցցէ Տէրութեանն մերոյ. ի հաստատութիւն բանիս ստորագրեալ կնքեմք.

ի 1828 ամի
ի դեկտ. 10
ք վանս սպաթի։

Արք եպս. Սիւնեաց հայոց
Կնիք Մարտիրոս Տաթևացի

Սիմէօն
Կնիք Արք եպս
Տաթևացի